Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված «Գոուինգ Գլոբալ 2023 - դեպի կայուն, մասշտաբային և հավասար համագործակցություններ բարձրագույն կրթության ոլորտում» խորագրով գիտաժողովին մասնակցության

1. Անունը, ազգանունը

Մարիանա Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Էդինբուրգ, 20-22 նոյեմբերի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված «Գոուինգ Գլոբալ 2023 - դեպի կայուն, մասշտաբային և հավասար համագործակցություններ բարձրագույն կրթության ոլորտում» խորագրով գիտաժողովին

6. Քննարկված թեմաները

- Նորարարությունների ոլորտում ազգային քաղաքականությունների դերը հավասարության սկզբունքով գործընկերությունների կառուցման գործում,
- տրանսազգային կրթությունը՝ որպես գլոբալ գործընկերության ձևաչափ,
- արհեստական բանականության կիրառմամբ կրթության հավասարության ապահովման մարտահրավերները,
- կրթական համակարգում թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառմանն առնչվող էթիկական կանոնակարգեր, կրթական գործընթացում արհեստական բանականության կիրառման առավելությունները և բացասական հետևանքներին դիմակայելուն ուղղված կարգավորումներ,

- կայուն զարգացումը, ներառականությունը, բազմազանությունը և գենդերային հավասարությունը գլոբալ գործընկերության համատեքստում,
- բարձրագույն կրթության ազգային համակարգերի ներդաշնակեցումը հավասարության սկզբունքով գործընկերությունների համար,
- աշխատաշուկա, հմտություններ, կրթության բովանդակություն, շարժունություն:

7. *<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>*

Նոյեմբերի 20-ին մասնակցել եմ գիտաժողովի հանդիսավոր բացման արարողությանը և պլենար զեկուցմանը, որի ընթացքում ներկայացվել են գիտաժողովի հիմնական առաքելությունը և նպատակները՝ գլոբալ մարտահրավերների պայմաններում բարձրագույն կրթության ոլորտին ներկայացվող պահանջների վերանայման և գլոբալ գործընկերությունների ստեղծման ու դրանց զարգացման տեսանկյունից: Նոյեմբերի 20-ին մասնակցել եմ նաև Սընթ Էնդրյուզ համալսարան կազմակերպված ծանուցողական այցին: Այցի ընթացքում ներկայացվել է համալսարանի կառուցվածքը, առկա կրթական և հետազոտական ծրագրերը, ինչպես նաև կայուն զարգացման նպատակներին ուղղված մասնագիտական ծրագրերի և իրականացվող հետազոտական նախագծերի ներդրման փորձը և հաջողությունները:

Նոյեմբերի 21-ին մասնակցել եմ հետևյալ խորագրերով նստաշրջաններին՝ «Արհեստական բանականության ինտեգրման էթիկական հարցերը», «Բարձրագույն կրթության ոլորտի ներդաշնակեցումը՝ որպես հավասարության սկզբունքով գործընկերությունների երաշխիք»: Մասնակցել եմ նաև «Բարձրագույն կրթության նոր հարացույցը գլոբալ գործընկերության համատեքստում» խորագրով պլենար նիստին:

Նոյեմբերի 22-ին մասնակցել եմ հետևյալ խորագրերով նստաշրջաններին՝ «Բարձրագույն և շարունակական կրթության զարգացումը», «Համալսարանները, արհեստական բանականությունը և գլոբալ բարեկեցությունը» և «Համատեղ հետազոտությունների ոլորտում գործընկերություններ՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին հասնելու համար»: Մասնակացել եմ նաև «Նոր սերնդի ձայներ. համատեղ կերտելով կրթության ապագան» պլենար նիստին:

Բոլոր նստաշրջանները ուղեկցվել են գործնական աշխատանքով և քննարկումներով, որոնց ընթացքում մասնակիցները ներկայացրել են բարձրացված հարցերի վերաբեյալ տեսակետներ և կատարվել է մտքերի փոխանակում:

Գիտաժողովի մի շարք մասնակիցների հետ (Լեհաստան, Հնդկաստան, Ուզբեկստան, ՄԹ) կատարվել է մտքերի փոխանակում գիտաժողովի ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ նշված երկրներում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող միջոցառումների, զարգացումների և առկա մարտահրավերների վերաբերյալ: Ներկայացրել եմ տեղեկատվություն ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտի կառուցվածքի, առանձնահատկությունների և ռեֆորմների վերաբերյալ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գիտաժողովի հիմնական նպատակներն էին՝ ներկայացնել բարձրագույն կրթության ոլորտում գլոբալ մարտահրավերները, ինչպիսիք են՝ կայուն զարգացման թիրախներին միտված ծրագրերը, հավասարություն, ներառականություն, կրթության թվայնացում, արհեստական բանականության կիրառման էթիկական կարգավորումներ, փոփոխվող աշխատաշուկա, նոր հմտությունների խրախուսում, ընդգծել տրանսազգային համագործակցության կարևորությունը, ներկայացնել մի շարք երկրների փորձը՝ դրանով իսկ խթանելով մասնակից երկրներում գործընթացների ներդաշնակեցմանը՝ տրանսազգային կրթության ոլորտում գործընկերությունների զարգացման նպատակով:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բրիտանական խորհրդի հայաստանյան ներկայացուցչության ղեկավարի հետ տեղի է ունեցել մտքերի փոխանակում գիտաժողովի ընթացքում արծարծված հարցերի շուրջ, պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակելու քննարկումները՝ բարձրագույն կրթության ոլորտին ներկայացվող ժամանակակից պահանջների ուղղությամբ Բրիտանական խորհրդի հնարավորությունների և առկա ռեսուրսների ընդգրկմամբ համագործակցության հնարավոր ուղղությունները հստակեցնելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Սարգսյան
28.11.2023 թ.